

ՆԵՐՏՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՆԻ

Տարեկան դիմել 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ապրիլի 1-ից սինչի տարվայ վերջը
կարժենայ ՈՒԹ՝ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
ապրիլի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղորօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապրիլի բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Եապոնական խոզաբուծները և լրտեսները.
— ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն.
Փոխտու խնայողական ընկերութիւններ: Նա-
մակ Մօսկվայից. Ներքին լուրեր.— ՄԻՏՏԱԲԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջ. Թիւրքիան
և Եւրոպան.— ՀԵՌԱՅԻՆԵՐԸ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— ԼԵՆԱՍՏԱՆԻ
հայերը:

ԵԱՊՈՆԱԿԱՆ ԽՈԶԱԲՈՎՈՒՆԵՐԸ ԵՒ ԼՐՏԵՍՆԵՐԸ

Այն մի շարք թղթակցութիւնները, որոնք
ապրիլի մայրաքաղաքի թերթերում,
ցոյց են տալիս, որ եապոնական կառա-
վարութիւնը ունի լրտեսների մի շատ
մեծ բազմութիւն Հեռուոր-Արեւելքի բո-
լոր կէտերում: Չինաստանում, Կորեայում
և Մանչուրիայում, իսկ նորերս պարզվեց,
որ եապոնական լրտեսներ գոյութիւն ու-
նեն նաև արևմտեան Եւրոպայում և նոյն
իսկ ծաղեց մի թիւրքիմացութիւն Պրան-
սիայում գաղտնի դօկումենտների գրաւ-
ման առիթով:

Եւրոպական լրագիրների թղթակցները
պատմում են մի շարք դէպքեր եապոնա-
կան լրտեսների գործունէութեան մա-
սին, որոնց մէջ այդ լրտեսներին վերա-
գրվում են զանազան խորամանկութիւն-
ներ և անկասկած երբեք չափազանցած
հնարագիտութիւններ: Իրողութիւնն այն
է, որ եապոնական լրտեսութիւնը աչքի
ընկնող մի երեւոյթ է, որը չէ կարելի
առանձնապէս չընդգծել:

Մեր կարգում մեր «Новое Время»
լրագրի մէջ Պորտ-Արտուրի կամենդանտի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Անցեալ տարի Կամենեց-Պոդոլսկ քաղաքում
լոյս տեսաւ 27 երեսից բաղկացած մի բրոշուր,
որի վերնագիրն է. «Колонизация армянъ въ
юго-западной Россіи» (Հայերի գաղթականու-
թիւնը հարաւ-արեւմտեան Ռուսաստանում):
Հեղինակը ծածկված է Ե. Կ. տառերի տակ:
Բայց բրոշուրից կարելի է հետեւեցնել, որ նա
ռուսաբան է: Աշխատութիւնը արտատպւած
է Պոդոլսկի թեմական լրագրից, որ, ինչպէս
յայտնի է, տեղային ուսուցիչականութեան
պաշտօնական օրգանն է: Հեղինակը ձեռքի
տակ ունեցել է բազմաթիւ աղբիւրներ, բոլորն
էլ, ի հարկէ, ուսուցիչ լիզուով: Մի քիչ միա-
կողմանիութիւն կայ այս հանգամանքի մէջ.
Լեհաստանում միայն հայերը չէին հալածվում
կաթօրիկութիւն ընդունել տալու համար: Հա-
յերի հետ բախտակից էին և յունադասան
առանները: Ուրեմն, այս դէպքում ուսուցիչն էլ
հայերի պէս են—հալածված, զոհեր տուած
կողմ: Միայն մի կողմից լսելով բաւական չէ.
պատմական եղիւթիւնը լուսաբանելու հա-
մար պէտք էր լսել և հակառակ կողմը, հալա-
ծողներին էլ, որոնք նոյնպէս շատ տխուր
փաստեր են տալիս կրօնական ֆանատիկոսու-

մետրվարի 14-ին հրատարակած հետե-
ւեալ հրամանը՝ վերաբերեալ օտար լրտես-
ներին և խուզարկութիւններին.

«Չը նայելով այն բանին, որ երէկ
բռնել էին 20 հոգու, որոնք ինչ որ նը-
շաններ են տալիս, այս գիշեր, ժամի 3-ի
մօտերը, իմ տան և խոտենդանաւային
պահեստների միջև գտնվող հրապարա-
կում մի ոմն նշաններ էր անում լապ-
տերով: Նրան չը կարողացան բռնել: Նա
փախաւ դէպի նոր չինական քաղաքը:
Այն բոլորին, որոնք կը բռնվեն այդ ան-
մեղ գործողութիւնների համար, ես դա-
տի կենթարկեմ պատերազմական ժա-
մանակի օրէնքների համաձայն: Այն պա-
հալներին, որոնք կը հիմնվեն հակելու նպա-
տակով, պարտաւորեցնում եմ, որ նրանք
հրացանազարկ անեն փախչող նշանա-
տուներին: Առաջարկում եմ քաղաքացիա-
կան կամիսարին յայտնել հրամանը ընդ-
հանուրէ գիտութեան համար:»

Մի ուրիշ հրամանով կամենդանտը
կրկնում է նոյնը և պատուիրում է հրա-
մանը կայցնել պատերին չինական, անդ-
լիական և ուստական լեզուներով:

Պորտ-Արտուրում, Դաւիթում, Նիւ-
Չժոուսում և ուրիշ տեղերում արձա-
նագրվել են մի շարք դէպքեր եապոնա-
կան լրտեսութեան սխրագործութիւննե-
րից: Մակայն այժմ ձեռք է առնված
այդ լրտեսութեան դէմ ամենահետաժող
աշարջութիւն:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Paul Rohrbach: «Vom Kaukasus zum Mittel-
meer»—mit 42 abbildungen. 224 s. Պ. Ռօրբախ.
Կովկասից մինչև Միջերկրական ծովը. 42 պատ-
կերով, 224 երես:

Դոկտոր Ռօրբախի անունը վաղուց արդէն
ծանօթ է հայ հասարակութեանը: Նա մի քա-
նի անգամ այցելել է Կովկասը, Փոքր Ասիան
ու Միջագետքը, տեսել է հայ ժողովրդի կեն-
ցաղը, նրա պէս-պէս կարիքները և այդ բոլո-
րի հետեանք կազմող ապաւորութիւնները հրա-
տարակել է թէ լրագրական յօդուածներով և
թէ առանձին գրքերով:

Ան այդ տեսակ տպաւորութիւնների մի
երկար շղթայ է ներկայացնում այս վերջին

թեան, եղուիտների սխրագործութիւնների
սոսկալի պատկերը լրացնելու համար: Բայց
և այնպէս, բրոշուրի հեղինակը աշխատել է
փաստերով և պատմական վաւերագրերով խօ-
սել և նրա վերաբերմունքը դէպի հայերը բա-
ւական անկողմնապահ է:

Այժմեան Կամենեց-Պոդոլսկ նահանգական
քաղաքը Ռուսաստանին անցաւ Լեհաստանի
բաժանման ժամանակ: Դա լեհական նշանա-
ւոր քաղաքներից մէկն էր, և հայերը այդ քա-
ղաքում խոշոր ու աչքի ընկնող գաղթականու-
թիւն էին կազմում: Տիրահոյսակ Նիկոլ եպիս-
կոպոսի բռնութիւնների ժամանակ Կամենեցի
հայերը յամառ դիմադրութիւն ցոյց տուին ի-
րանց ազգային սեփականութիւնը պաշտպա-
նելու համար: Այն ժամանակ, երբ Լվովի
հայութիւնը, երկար մարտունակներից, կատա-
րեալ անօգնականութիւնից ուժաւորւած դար-
ձած, տեղի էր տալիս կաթօրիկական բռնու-
թիւններին, Կամենեցը դեռ շարունակում էր
պաշտպանել իր ազգային ինքնութիւնը ծէսը:
Այստեղ կատարվեց դրամայի վերջին գործո-
ղութիւնը, այստեղ այնքան հայեր էին ապ-
րում, որ հարկաւոր եղաւ չորս եկեղեցի կա-
ռուցանել: Հետեաւոր, այստեղ պէտք է որո-
նել պատմական առատ նիւթեր:

Բայց ներկայ ուսուցիչն աշխատութեան մէջ
մենք չենք գտնում շատ այնպիսի տեղեկու-
թիւններ լեհահայերի կեանքից, որոնք առա-
ջին անգամ լինէին լոյս հանվելու: Եւ եթէ
մենք ուզում ենք խօսել նրա մասին, պատճա-

աշխատութիւնը¹⁾, որը աչքի է ընկնում իր
արտաքին շրջապատում ու ներքին հետաքրք-
րաշարժ բովանդակութեամբ:

Յարգելի հեղինակը նկարագրում է իր ճա-
նապարհորդութիւնը Կովկասից մինչև Միջերկ-
րական ծովը և տեղ-տեղ այդ նկարագրութիւ-
նը համեմտում համապատասխան խոհերով ու
խորհրդածութիւններով:

Ան նա իր կողմ հետ ճաշկերպի է հրա-
ւիրված թիֆլիսի այգիներից մէկում, լսում է
սազանդարների երաժշտութիւնը և յիշում, թէ
«հայերը միշտ հարուստ են ազգային ու ժո-
ղովրդական երգերով»:... Նա լսում է «Անի
քաղաք» երգը և իսկոյն պատկերացնում այդ
թշուառ քաղաքի անկախները, դրանց հետ
կապված փառապանք յիշողութիւնները:

Նա շփոււմ է հայ և վրացի ազգութիւնների
հետ և դուրս բերում դրանց մասին իր եզրա-
կացութիւնները.— «Վրացին անընդունակ չէ,
առում է պ. Բորբախ, բայց ծոյլ է... Իւրա-
բանիւր վրացի ծնված օրից մի grandseig-
neur (մեծ պարոն) է: Լաւ խնայելի, երաժշ-
տութեան, պարի, ուրի, գեղեցիկ շորի, ձիու
և զինախաղի համար նա պատրաստ է ամեն
ինչ տալ, ամեն ինչ գոհել... Բոլորովին այլ
յատկութիւններ ունի հայը—յատկութիւններ,
որոնք առաջ են եկել պատմական հանգամանք-
ներից»:

Այդ «հանգամանքները» պարզելու համար
պ. Բորբախը համառօտակի յիշում է հայի ան-
ցաղը, շեշտում է, թէ ինչպէս նա շարունակ
հայրածված է եղել աւելի գորից ազգերից, թէ
ինչպէս նրա ազգային յատկութիւնները ճնշ-
ված են օտարների կողմից: «Այդ բոլորից յի-
շող, եղբայրացում է հեղինակը, հային միտ
է միայն մի բան՝ օտարների իշխանութեան
տակ կարելոյն չափ բարձր վիճակ ստեղծել
հարստութիւն հաւաքելով... Մոլորութիւն կը
լինի, եթէ հայերի այդպիսի տարբերութիւնը
վրացիներից պակասութիւն համարենք: Ընդ-
հակառակը, ներկայ փորձը ցոյց է տալիս, որ
ընդհանրապէս հայը իր շնանարկութեամբ ու
ընդունակութիւններով շատ բարձր է վրա-
ցից...» (Եր. 10—11): «Հայաբնակ վայրերում
և նոյն իսկ նրանց հարեան երկիրներում տըն-
տեսական—կուտորական առաջադիմութիւնը
կարող է կատարվել միայն հայերի ձեռքով:
Ոչ մի ոյժ չէ կարող փոխել այդ իրողութիւնը:
Նրանք ունեն բնաւորութեան և հոգեկան այն-
1) Դրա մի մասը 1898 թ. լոյս է տեսել «Tägliche
Rundschau» օրաթերթում:

ու աւելի այն է, որ նրա մէջ էլ կրկնված են
մի քանի հանգամանքներ, որոնք պատմական
նոր փաստերի բնաւորութիւն ունեն և նոր
լոյս են ափում մի բանի հետաքրքրական
հարցերի վրա:

Այդ տեսակ հարցերի մէջ առաջին տեղն է
գրաւում Լեհաստանի հայ գաղթականութեան
ծագումը: Մինչև այժմ տիրում է այն հա-
մոզմունքը, որ հայերը Լեհաստան գաղթեցին
Անիից: Իր ծաղկման և փառքամոլութեան մի-
ջոյն Բագրատունիների հոշակաւոր մայրա-
քաղաքը այնպիսի տեղ չէր, որ այդքան հե-
ռու փախչելի իր բնակիչներին: Ուստի են-
թադրում են, որ Անիի սկսեց դատարկվել այն
օրերից, երբ անողորմ ճակատագիրը նրան
վայելութիւնների, շրջապատի մայրաքաղա-
քից դարձրեց սուգի քաղաք: Այդ վիճակը,
ինչպէս յայտնի է, իրականութիւն դարձաւ
Անիի թագաւորութեան վերջնական անկումից,
որ տեղի ունեցաւ 1045-ին: Այդ թուականից
յետոյ գալիս են Անիի պարբերական աւերում-
ները, որոնք շատ անգամ կրկնվեցին: Ուրեմն,
բնակիչների հեռանալը պիտի սկսված լինի
1045-ից յետոյ: Հեռանալը գաղթի օտար եր-
կիրներ շատ բնական մի ձգտում պիտի լինէր
անցիկների համար: Փարթիականութեան մէջ ապ-
րող մայրաքաղաքի ազգաբնակչութիւնը զլիա-
ւորապէս առեւտրական դասակարգ պիտի կազ-
մէր: Իսկ առեւտրականութիւնը նախ կօմօպո-
ւիւրութիւն է, երկրորդ՝ իր զարգացման հա-
մար պահանջում է խաղող գրութիւն: Այդ

պիտի յատկութիւններ, որոնց շնորհիւ կարող
են մրցակից ազգերից միշտ էլ առաջ անց-
նել... (Եր. 13): Այն բոլոր հեղինակները,
որոնց կարծիքով հայերը խաղալու ու խա-
րալայ են, անշուշտ չեն ճանապարհորդել հա-
յաբնակ ներքին նահանգներում: Ով որ այցե-
ւել է թիւրքական կամ ուստական հայաստանի
խորքերը, նա անպատճառ համոզված կը լինի,
թէ միշտ մեծ, հիմնական տարբերութիւն
կայ գաղթական և հայրենիքում ապրող հայերի
միջև: Գաղթական հայը բոլոր օտար ազգերի
վերաբերմամբ խորամանկ, դրժուկեայ և ազ-
գային տեսակետից հակակրօնի մի մրցակից
է. յամենայն դէպս բարոյապէս ոչ աւելի ստոր,
քան յոյները, պարսիկները, ասորիները, թա-
թարները և այլն. բայց գործնական կեան-
քում նրանցից աւելի խորամանկ ու արդիւ-
նաւետ: Հէնց դրանից էլ առաջ է դալիս այն
հակաւորութիւնը, որով վերաբերվում են արե-
ւելքում ճանապարհորդող օտար երկրացիները
դէպի հայերը: Սակայն հայ ժողովուրդը իւր
բնիկ հայրենիքում մեծ չափով ցարթելում է
գաղթականներից. նա խիստակաւ երկրագործ ժո-
ղովուրդ է բաւական բուն նշանակութեամբ...
(Եր. 123):»

Պարզ է, ի հարկէ, որ գերմանացի ճանա-
պարհորդի այդպիսի հեղինակաւոր կարծիքը
հայերի մասին շատ մեծ ազդեց ունի իւրեւ
կենդանի հերքում Նաումանի²⁾ և ուրիշ գեր-
մանացի հեղինակների այն հրէշաւոր կարծի-
քի, թէ հայկական ապստամբիկ կոտորածների
պատճառը իրանց հայերն են, թէ «Համբիդի կա-
ռավարութիւնը մեղաւոր չէ, որ թիւրքերն ու
բիւրդերը կոտորում են իրանց խաղալու, խա-
րեւայ հարեաններին»:

Սակայն այդքանով չէ բաւականանում պ.
Բորբախ: Նա ամեն մի յարմար առիթից օգուտ
է քաղում, որպէս զի գերմանացի ընթերցող-
ների առաջ բաց անէ հայկական իրականու-
թիւնը, նրա կենցաղն ու շրջապատող պայ-
մանները:

Նա նկարագրում է Սևանը, Էջմիածնի
վանքը և դրա հետ միասին խօսում հայ հո-
գեւորականութեան մասին, յիշում է, թէ վերջին
ժամանակներս միշտ ուժեղացել է նրա ձգ-
տումը դէպի եւրոպական բարձր կրթութիւնը:
Շիրակի մասին խօսելիս առաջ է բերում Շող-
լուքի լեռնի մասին, աւերակները, իսկ երբ Արա-
րատի ձառով մտնում է թիւրքահայկական
նահանգները, գեղեցիկ թարգմանութեամբ ա-

2) Դրա գրքի մասին խօսել ենք 1902 թ. «Մշակում»:

գրութիւնը չէր կարող ապահովել հարեան
բրիտանիայ և ոչ-բրիտանիայ ազգերի մէջ
կուռածադիկ դարձած Անիի: Եւ ահա, ինչպէս
բնական էր սպասել, անեցուն մենք տեսնում
ենք Լեհաստանում առեւտրական գործերի մէջ,
լայն արտօնութիւնների և ինքնավարութեան
տիրացած:

Այսպէս էինք մենք հասկանում Լեհաստանի
գաղթականութեան ծագումը: Սակայն նոր
աղբիւրները գալիս են կերպարանափոխելու
այդ հակադրողութիւնը: Ռուսաստանում երեւե-
ցած առաջին հայերը գաղթականներ չէին այն
մտքով, ինչպէս մենք ենք հասկանում, այսինքն
բնութիւններից և կոտորածներից փախած,
հանգստութիւն որոնող մարդիկ: Դրանք նոյն
իսկ վաճառականներ չէին, այլ զինուորներ:
Կիւիլի ուսու իշխանները երկար պատերազմ
ունէին Բօլսլավով Փաշի հետ և այդ պատե-
րազմի միջոցին, 1009 թականին, նրանք ի-
րանց օգնութեան կանչեցին հայերին: Նոյն XI
դարի երկրորդ կեսում հայերը նորից հարկա-
ւոր եղան առաններին դարձեալ պատերազմա-
կան գործողութիւնների համար և նրանք, ասա-
նալով ուսու իշխանների հրաւերը, նորից գնա-
ցին Կիւիլ իւրեւ օգնական: Յայտնի չէ թէ
1009 թին հայերը ո՞ր կողմից հրաւիրեցին
Կիւիլ: Իսկ երկրորդ անգամի վերաբերմամբ
ճիշտ յայտնի է և այն տեղը, որտեղից նրանք
կանչվեցին: Աղբիւրները այդ տեղը անուա-
նում են Թաթարիւր և յետոյ աւելացնում են,
որ հայկական զօրքերը մնաց Կիւիլում և այդտե-

առջ է բերում Բաֆֆի «Ջալալեդդին» ամբողջ գրութեանը, որպէս զի գերմանացի ընթերցողները բնիկէք գոյներով պատկերացնեն հայերի թշուառ վիճակը Թիւրքիայում:

Պ. Բորբախ այցելում է նաև Վան, Տարսուս, Եփրատի ու Տաւրոսի շրջակայքը, Ուրֆա, Դիարբեքի և այլ բնակավայրերից խորքանշիւրի մասին հաղորդում ազգագրական, հնագիտական ու տեղագրական հետաքրքիր տեղեկութիւններ:

Մի առանձին նորութիւն չեն պարունակում այդ տեղեկութիւնները, բայց համեմատ լինելով ճանապարհորդի թուղթի տպագրութիւնների հետ, դարձնում են «Կովկասից մինչև Միջերկրական ծովը» գիրքը ընթերցանութեան մի ուշադրու ու գնահատելի նիւթ բոլոր այն մարդկանց համար, որոնք հետաքրքրվում են հայկական իրականութեամբ, Կովկասի ու Փոքր Ասիայի հարցերով:

Ե. Թովչեան

ՓՈՆԱՏՈՒ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ (շառակ երեսնից)

Ռուսաստանում շատ բան է արված մեծ առևտուրը և խոշոր արդիւնաբերութիւնները դարգացնելու համար, բայց շատ քիչ բան՝ համարեա ոչինչ է արված մանր առևտուրը, արհեստները և մասնատանքը գիւղական մանր արդիւնաբերութիւնը դարգացնելու համար:

Այսպէս, առևտրական և արդիւնաբերական կենտրոններում, այն է քաղաքներում և գործարանական վայրերում հիմնվել և շարունակ հիմնվում են առևտրական, փոխադարձ վարկի և հազար ու մի անուան տակ գործող բանկեր, որոնք դրամ հաշիվայթում են միմիայն մի որոշ արտօնեալ դասակարգի, այն է գործարանատերերի, վաճառականների և հարուստ կառուածատէրերի համար, որոնք այսպէս կամ այնպէս կապված են այդ հիմնարկութիւնների հետ: Այդ հիմնադրների վրա է դրված նաև պետական բանկը իր բաժանմունքներով, որը հնարաւորութիւն ունի ամենից ցած տոկոսով դրամ բաց թողնել վարկատէրերին: Այս հիմնարկութիւններից և ոչ մէկում էլ մուտք չունի մանր առևտրականը, արհեստաւորը և մասնատանք գիւղական երկրագործ դասակարգը:

Այս հանգամանքը ստեղծել է առաջ է բերել երկու հակադիր ծայրեր, միմեանց չը նմանվող, միմեանցից խիստ տարբերվող երկու դրութիւններ: Մի որոշ դասակարգ տեղեկ է իր համար ամեն մի յարաբերութիւն, իր գործերը կարգաւորելու և զարգացնելու կարելիութիւն, իսկ մի այլ դասակարգ, մասնաւոր կազմող դասակարգը մնացել է դուրսը, բոլորից մոռացված, իր բողոքին թողնված, որը անվերջ տանջվում է գիւղական բուռնցքների, վաշխառուների ճանկերում:

Մանր առևտրականը, արհեստաւորը միջոց չունի իր մանրածախ առևտուրը և արհեստը առաջ տանելու: Նրան էօրէն սովորով փող չեն տալիս, նա ստիպված վաշխառուական տոկոսներ է վճարում և հենց այդ տոկոսների տակ էլ խեղդվում—մեռում:

Կից տարածվեցին հարաւ-արևմտեան Ռուսաստանում, բնակութիւն հաստատելով իրանց ստացած պտուղներ հողերի վրա:

Ուշադրութիւն դարձնենք նախ և առաջ իրականների վրա: Ոչ 1009 թականին, ոչ գրանից առաջ ու յետոյ Անիից գաղթականութիւն հեռանալ չէր կարող, որովհետև Բագրատունեաց մայրաքաղաքը երբեք այնքան շքեղութեան և մեծութեան չէր հասել, ինչպէս Գագիկ առաջին թագաւորի ժամանակ (989—1020): Այդ ժամանակամիջոցը շինարարական մեծագործութիւնների մի խաղաղ շրջան էր երբ քաղ թագաւորի հրամանի տակ երկիրը վայելում էր կատարեալ անդորրութիւն: Անկարելի է ենթադրել, որ այնպիսի մի շրջանում, երբ վերջացաւ հրաշալի մայր եկեղեցու շինութիւնը, երբ սկսվեցին տարիք գեղեցիկ շինութիւններ և Անիի առաջնակարգ բերդ էր՝ անմասն ամբողջութեամբ շրջապատված, նրա մէջ կամ նրա շուրջը ապրող ազգաբնակչութիւնը որ և է կարելի դարձրել գաղթելու Ռուսաստան: Մասնաւոր անկարելի է ենթադրել անգամ, որ Կիևի իշխանները, որոնցով օգնական զօրը, պատգամաւորներ ուղարկեցին Հայաստան:

Ոչ Հայեր կային Ռուսաստանի սահմանակից երկրներում դեռ այն ժամանակ, երբ Անիի արևելքի կապիւնը գեղեցիկութիւն էր և բերդաշէնակա կայսրերի նախնանք էր գրգռում: Բայց զրոյեղ պէտք է որոնել այդ հայերին: Մենք տեսնում, որ ռուս աղբիւրները

Ուրեմն ի՞նչ անել անվերջ պարտքերի տակ թաղված և անխիղճ տոկոսների ծանրութեան տակ տնտեսապէս քայքայված գիւղական և արհեստաւոր դասակարգերի դրութիւնը բարեւորելու համար: Էօրէն սովորով դրամ, գիւղական փոխառութիւն, ահա այն միջոցները, որոնք կը գան կերպարանափոխելու նրանց դրութիւնը:

Այս հանգամանքը չէ վերաբեր նաև կառավարութեան ուշադրութիւնից և ահա 1895 թուին երկրագործութեան և ֆինանսների միջնորդութիւնների մշակած ընկերակցութիւնների նորմալ կանոնադրութիւնները գալիս են այդ պահանջներին բաւարարութիւն տալու:

Այդ կանոնադրութիւնը, որը կրում է «Փոխառութիւնային ընկերութիւն» (Сред-Обергательное Товарищество) ընդհանուր անունը, միջնորդութեան կողմից թողարկվում է գործադրել շատ հեշտութեամբ խրաբանչիւր տեղում, ուր մի որոշ թիւ մարդկանց մէջ, այն է ոչ պակաս 20—30 հոգուց, միտք է ծագում կազմել մի այդպիսի ընկերութիւն: Այդ անձինք մի խնդրագրով տեղական իշխանութիւնների միջոցով դիմում են միջնորդութեան և մի քանի շաբաթներից յետոյ նոյն ձևապարտով ստանում թոյլտւութիւն:

Կանոնադրութեան ողին ինքնօգնութեան գաղափարի իրականացումն է, որը ձգտում է հաւաքական ուժերով օգնութեան գալ առանձին անհատների փոխադարձաբար: Այսպէս, ընկերութեանը մասնակցել ցանկացողը, որ կարող է երկու տեղից լինել, բայց ոչ պակաս 21 տարեկանից՝ իւրաքանչիւր անհատ, պիտի վճարէ անդամավճար ոչ աւելի որոշեալ չափից, որ սովորաբար 100 ռուբլի է լինում, և այն էլ մաս մաս վճարով, այն է՝ տարեկան 10 ռուբլով: Այս ձևը հենց ինքը խնայողութիւնն է, որի անունով և կոչվում է ընկերութիւնը: Անդամ կարող է պարտք վերցնել ընկերութիւնից 5—6 անգամ աւելի գումար իր անհատական: Իւրաքանչիւր անգամ ունենում է մի ձայնի իրաւունք: Բոլոր պաշտօնականները, վարչութեան, խորհրդի և քննիչ յանձնաժողովի անդամները ընտրվում են բոլոր անդամների բողոքաւորութեամբ:

Ընտրողական այս գովելի սկզբունքը հնարաւորութիւն է տալիս պաշտելի կանչել անհատների շահերը սրտից մօտ անող անձանց, մի հանգամանք, որի առաւելութիւնը շատ ուշադրութեամբ է, եթէ ի նկատի ունենանք այժմեան աղայական, բուրժուական հոգին, որը թագաւորում է ամեն տեղ:

Ընկերութեանը թոյլ է տրվում միջերեսներ ար ու ծախել միջնորդութիւն իր անդամների համար, և բացի այդ օգնութեան գալ իր անդամների կարօտ ընտանիքներին նրանց մասվան կամ նոյն իսկ հիւանդութեան դեպքում: Միջնորդութիւնը այդ ընկերութիւններին գիւղութիւններ տալու նպատակով ազատել է նրանց շահեցվող գումարների պետական օձիւրի մարեցանքի և մուրհակային տուրքերից, որը մեծ նշանակութիւն ունի որպէս խնայողութիւն:

Ինչպէս տեսնում էք, մանր առևտրականներ

տալիս են թաթարիս անունը: Իսկ այդ անունով պէտք է հասկանալ այժմեան արևելեան և հարաւ արևելեան Ռուսաստանը, ուր հին ժամանակից ապրում էին զանազան թիւրք ցեղեր: Հայ գաղթականութիւն թաթարիսում գաղթելու ունեն, պէտք է կարծել, XI դարից առաջ: Իսկ թէ որտեղից էին գաղթել այդ հայերը, հարկ է թէ կարելի լինի ճշտ որոշել: Բանի որ ճշտ յայտնի չէ և թաթարիսի այն կողմը, ուր ապրում էին այդ հին գաղթականները:

Այս, ի հարկէ, չենշանակում թէ Անիից հայեր չը գաղթեցին դէպի Ռուսաստանի կողմը: Բայց Անիի գաղթականները, որոնք XI դարի երկրորդ կեսից սկսած դիմում էին դէպի հիւսիս, պէտք է տեղեկութիւն ունենային, որ այն կողմերում կան հայեր և ուղղէին իրանց անհապաղելով դէպի նրանք: Անշուշտ անեցիները շատ տեղ խառնվեցին այդ հին գաղթականների հետ, բայց մեր պատմութեան մէջ չը կայ այդ հնեի յիշատակութիւնը, մինչդեռ հին և նոր գաղթականները մէջ շատ հիմնաւոր տարբերութիւններ կային:

Յանկարծ մենք իմանում ենք, որ XIII դարի կէսում անեցի գաղթականները գնացել են Ախաթայ, որ գտնվում էր Աստրախանի և Կազանի մէջ: Դա թաթարաստան էր: Առաջին անգամից անհասկանալի է թուում, թէ ինչպէս են դրանցիւնները, թաթարական սրերից փախչելով, ապաստան որոնեցին այն հեռաւոր տեղում, ուր դարձեալ նոյն թաթարական սուրն

ը, արհեստաւորների և մանր արդիւնաբերողների համար շատ նպաստաւոր ընկերութիւն է այս: Այս հանգամանքով պիտի բացատրել Նշտարակ գիւղում բացված ընկերութեան աշտոյթիւնը, նաև այն համակրութիւնը, որ տածում են Երևանում մի ամիս առաջ բացված նոյնանման բանկին: Այսպիսի մի ընկերութիւն բացվեց այս օրերս նաև Երևանի գաւառի Կամարու գիւղում:

Ա.—Դօ

ՆԱԽԱ ՄՈՍԿՎԱ

Մարտի 2-ին Մոսկվայի գաղութի հասարակական կեանքի մէջ նկատվող ուրախալի երևոյթներից մէկն էլ այն է, որ հասարակութեան պարտաճանաչութիւնը քանի գնում զարգանում է և իբրև նշան այդ զարգացման՝ այս թէ այն կերպով երևան են գալիս երևոյթներ, որոնք փաստօրէն ազգայնաց ինքնօգնութեան աղբիւրներ են: Այն, ուրախալի է արձանագրել, որ Մոսկվայի հայ հասարակութիւնը ուղում է գործով ցոյց տալ իր կենսականութիւնը և մեծ-մեծ խօսքերի շրջանից անցնում է դէպի կենդանի գործը: Վնաս չունի, որ անցնելու մասում է եղել, հանգիստ քնի մէջ երանգներով է զբաղված եղել, դէպի հասարակական կեանքի պահանջները անտարբեր է եղել, չբուրդի ու անանիկ աղերսանքների ձայների առաջ փախկել է իր ախանջները... ասում եմ այդ անցնելու մասում եղած բանի հետ, ուստի չարժէ հին վերջերը առաջ բերել և խօսել նրանց մասին, որովհետև ինչպէս ռուսաց կեանքի տաղանդաւոր երգիչ Պուշկինը ասել է «Кто старое вспоминает, тому плазть боль!» պէտք է անցնել մեղքերը մոռացութեան տալ և ապրել ապագայի վաղվա յոյսերի կայծերով...

Ինչպէս յայտնի է, Մոսկվայի հայ գաղութը ունի մի պատկանելի հաստատութիւն: Բարձրագոյն հաստատված բարեգործական մի հիմնարկութիւն «Գրասարան Անկիւնացի» անունով, որի սկզբնական հիմնական նպատակն է եղել պատգարան լինել Մոսկվայում ապրող աղքատ հայրենակիցների: Ժամանակի ընթացքում այդ յարգելի հաստատութիւնը կատարել է ճշտօրէն իր պարտականութիւնը, համաձայն իր հաստատող կամքին և այդպիսով նրա գործունէութիւնը անկեղծապէս պատերից հեռու չէ անցել: Բայց հասարակական կեանքը քանի գնում առաջանում է, տեղիս գաղութի անդամների թիւը ժամանակի ընթացքում կրկնապատկվում, եռապատկվում և գալով մեր օրերին՝ տասնապատկվում է, ուստի և սրա մասնաւոր հասարակական բարեգործութեան շրջանը մեծանում է, նպաստներ խնդրողների թիւը զգալի կերպով աւելանում և այդպիսով բարեգործութեան համար բացվում է մի ընդարձակ ասպարէզ, որտեղ հարկաւոր են անհատներ և որտեղ ամենազգաւորը՝ անհրաժեշտ են նիւթական մեծ միջոցներ:

Անկեղծապէս միջոցները այնքան սուղ են, որ չէ կարող բաւարարութիւն տալ այն բոլոր խնդրատուներին, որոնք դիմում են նրան. նա հազիւ կարողանում է կատարել իր հիմնական

պարտականութիւնը՝ այն է տալ ապաստան այն չքաւորներին, որոնք գտնվում են նրա խնամակալութեան տակ:

Վերջին տարիները մեր երկրասարդ սերնդի երկու տեղից հազարի թիւով անհատներ գալիս լցվում են Մոսկվա՝ յաղեցնելու համար բարձր կրթութիւն ստանալու իրանց ծառաւ: Գրանցից հազարի մեծամասնութիւն են կազմում չքաւոր և միջին դասակարգի մարդկանց զաւակները, որոնք յոյսերը դրած Մոսկվայի նըման հարուստ հասարակութեան օգնութեան վրա, յաճախ տունաց կողեկի միայն ձանապարհածախսի փողով գալիս ընկնում են Մոսկվա: Գրասարան Անկիւնացի, որքան ներում են իր միջոցները, տալիս էր նպաստներ, բայց խնդրատուների թիւը այնքան մեծ էր լինում, որ շատերի խնդրերը մերժվում էր:

Մասին 2—2 տարի առաջ տեղիս հայ կանայք միտք յղացան կազմել մի առանձին կանայց ընկերութիւն, որի նպատակը լինելու էր իրանց սեռի ուսանողութիւններին օգնել, թէ նիւթապէս և թէ այլ կերպ: Պատիւ հայ կանայց, պէտք է ասել, այդ առիթով կազմված ընկերութիւնը ահա քանի տարի է ինչ որ գործում է, ամեն տեսակ թեթեւացնելով ուսանողութիւնների դրութիւնը:

Մնում էր աղամարդկանց ևս հետեւել կանայց օրինակին և, յիշաւի, այդ մասին խօսվել էր անցեալ տարվայ ծխական ժողովներից մէկում, բայց հարցը չէր լուծվել, որ և աղողվեց միայն Գրասարան Անկիւնացի այսօրվայ ընդհանուր ժողովում: Ներկայ եղող 22 ծխականները, հասկանալով խնդրի կարևորութեան չափն ու անհրաժեշտութիւնը, կազմեցին 5 հոգուց մի մասնաճիւղ, որը և այսօրվանից սկսում է գործել Գրասարան Անկիւնացի խորհրդի հովանաւորութեան և անուան տակ: Ժողովին բոլոր ներկայ եղողները զբեղեցին անշամ այդ նոր ընկերութեան և ինչպէս երևում է, գաղութիս ամբողջ հասարակութիւնը սկսել է իր մասնակցել այդ նոր գործին:

Շնորհաւորում ենք Մոսկվայի գաղութին այդ նոր ձեռնարկութիւնը և ցանկալով ամենայն աշտոյթիւն, ուրախանում ենք, որ առիթ ենք ունենում այդպիսի ուրախալի երևոյթների, հասարակական պարտաճանաչութեան այսպիսի փաստաւոր նշաններ արձանագրել լրագրից էջերում:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆՔ

Երկրագործութեան միջնորդութիւնը մի ծրագիր է ներկայացրել Պետական խորհրդին, որով առաջարկում է ուղղել և դաստիարակել գաղութներին և ապաստաններին նպաստ տալ սաներին գիւղատնտեսութիւն սովորեցնելու համար: Պետական խորհուրդը այս տարվանից մերժել է տալ նպաստի պահանջված քանակութիւնը, որովհետև ծրագրի գործադրական մասը պարզ և որոշ կերպով մշակված չէ. բայց սկզբունքով համաձայն լինելով այդ առաջարկի հետ, ցանկութիւն է յայտնել մանրամասն մշակված տեսնել ծրագրերը:

միջին ու գնացին պատերազմելու իշխանի համար: Իսկ 1380 թականին հայերը, թաթարների հետ միացած, յարձակվում են ռուսաց մեծ իշխան Դմիտրի Իվանովիչի վրա: Թաթարական բանակի հրամանատարն էր Մամայը, քրիստոնէութեան և Ռուսաստանի յայտնի թշնամին: Կոն էր անում նա Ռուսաստանում քրիստոնէութիւնը վերջացնելու համար: Անիի ժողովուրդը, որ յայտնի էր իր կրօնատիրութեամբ և բարեպաշտութեամբ, չէր կարող այսպիսի մի բանակի մէջ գտնվել:

Նոյն թաթարահայերն էին, որ Դրիմից անցան Լեհաստան և այնքան տիրապետող հանգիստայն այնտեղի հայ ազգաբնակչութեան մէջ, որ իրանց թաթարաթոսութիւնը ընդհանուր երկով է կազմում այն, որ լեհահայերը, ուսնալով իրանց մայրենի լեզուն, իրանց հետ տարած բազմաթիւ եկեղեցական գրքերը, յանկարծ կորցնում են այդ լեզուն մի այնպիսի երկրում, ուր թաթար ազգաբնակչութիւնը տիրապետող, կառավարող տարբ չէր հանդիսանում:

Այս հանգամանքը ցոյց է տալիս, թէ որքան մեծ ազդեցութիւն ունէր Ռուսաստանի հին գաղթականութիւնը այն գաղթականական հոսանքների վրա, որոնք գալիս էին Հայաստանից:

Ինչպէս լուրս էր, թիֆլիսի հայոց կուսակցութիւնը մայրաքաղաքէն ընտրուելու կոչուեցաւ Բաքու քաղաքէն: Բնակչութեանը հետեւեալ թիֆլիսի քաղաքական փոխանորդը և իշխան Բնակչութեանի Ժողովուրդը, որոնք հին աւանդութեան համաձայն մասնակցում են մայրաքաղաքի ընտրութեանը:

Ոստիկանական ընտրութիւն կառավարչինքն իրաւունք է տրված քրեական օրէնգրքի 416-րդ յօդուածի հիման վրա քաղաքական գործերի համար ձերբակալված բանտարկեալներին ընտրելու կարգը խնայարկելու համար իրանց բարենայեցողութեամբ ենթարկել յանգիմանութեան, իսկ պրօկուրորի հետ համաձայնվելով ենթարկել լոյս կամ մութ սենեակի կարգերի մի շարքովի ոչ աւելի ժամանակով, իսկ կարգերուն էլ աղմուկներին հազցնել և խաղաղացնող շարիկը:

Թիֆլիսի նահանգական դատարանում մարտի 15—18-ին ընկում էր թիֆլիսի քաղաքային վարչութեան ներքին 600,000 բնակչութեանը ընտրութեանը 8000 բնակչութեանը և մօտ 8000 բնակչութեանը ընտրութեանը: Սնցը պատահել է 1901 թվ. սեպտեմբերի 21-ին: Դատի ենթարկված էին 14 հոգի, որոնցից երկուսը—մի յոյն, 2 հիւսիսային անուշտով և մի վրացի, Օթիմէշարի, անուշտով կոտորուներն էին, իսկ մնացածները թաղանթի են այդ յանցանքը և վաճառել են արժէթովները, իմանալով որ դրանք գողացված են: Դատարանի վճռով յանցաւորներից 4 հրէայ—Բոյմէշարի, Բրէյալսկի, Պանդարո և 2 հիւսիսային, դատաւարարված են 8-ից մինչև 11½ տարի բանտարկութեան, երկուսը—Պանչէնկո և Պուզնիսկի—մի ամիս բանտարկութեան, իսկ մնացած 8-ը ճանաչված են արդարացրած: Արդարացածների թիւում են և այն երկուսը, որոնք մեղադրվում էին իրենց անուշտով կոտորուներ:

Բ ա գ ու ի կաթիլները բարեգործական ընկերութիւնը բաց է անելու մօտ ժամանակներս մի գրադարան-ընթերցարան: Թողաւորութիւնն արդէն ստացված է պատշաճաւոր իշխանութիւնից: Արդէն գրադարանի համար նուիրված են մօտ 1000 հատոր գրքեր: «Свѣ. Жизнь» լրագիրը հաղորդում է, որ Իրկուտսկում սկզբնական դպրոցները փակվելուց յետոյ ի նկատի ունեն փակել և գիմնական փակված բոլոր դպրոցները շէնքերը պէտք է գործածվեն պատերազմական նպատակների համար:

ԲԱՇԿԱՆԻՔԻԱՐ գիւղից (Կարսի շրջան) մեզ գրում են հետևեալը. «Մօտ օրերս Զարուշտի Պետրովիկա ուսանողի գիւղը բերվեցին 2 հատ արքունական լաւ տեսակի ձիեր տեղական ձիերը ազնուացնելու համար. ինձ հետաքրքրեց այդ բանը և մօտիկ ծանօթանալով իմացայ, որ կառավարութեան կարգադրութեամբ ամեն տարի այդ տեսակի ձիեր ուղարկվում են գիւղերը: Արդեօք հնարաւոր չէ մեր հայկական գիւղերի հասարակութեան մէջն ու մէկի համար խնդրամատոյց լինել, որ ուղարկեն նոյն պայմաններով օգտվելու ազնիւ տեսակի ցուլեր, եղջիրաւոր անասունների տեղական տեսակը ազնուացնելու: Վերջին տողերս գրում եմ առանձնապէս Բաշկադիլար և Գեօրգիանայ գիւղացիների հետաքրքրութեանը բաւականութեամբ տալու համար:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՄԻ ՇՈՒՐՁԸ

Եւրոպական պատերազմական ծրագիրը «Times» լրագիրը տալ է անգլիական մի օֆիցէրի համալիր հապօնական պատերազմական ծրագրի մասին. այդ օֆիցէրը լաւ ծանօթ է Մանչեսթրային: Նա համոզված է, որ ոչ Պորտ-Արտուրը, ոչ Վլադիվոստոկը չեն կազմում առաջին ծրագրի իսկական նպատակը: Նրանք ամի են իշխելու Նիւ-Զեւլանդի մօտ: Գրաւորվող հարաւարեւմտեան Մանչեսթրին, մի ամբողջ տարի, հապօնա-չինական պատերազմից յետոյ, հապօնացիները աշխատեցին շահել տեղական ժողովրդի արդարագործութեանը այն յոյսով, որ ապագայում այդ ժողովուրդը կօգնէ նրանց: Եւրոպացիները գեղեցիկ կերպով գիտեն այն տեղերը, որոնք յարմար են հետևակ գործի գործողութիւններին համար: Լիսաբոն գետը արդէն յոսանքի և լողացող ստացարկների պնդմանով չէ կարող փակվել ականաներով: Բաղադրում գործերը կը գտնեն հայաճառակներին և պաշարեղէնի անագին պահեստներ: Թէև գեներալ Կոնդրատովը

վերջ օժտված է զինուորական մեծ ընդունակութիւններով, բայց ընտրվելու նրա դէմ է և Նիւ-Զեւլանդը իր պահեստներով և զանազան շտեմարաններով կը դառնայ հիմնական հապօնական խուժան համար Մանչեսթրային: Նիւ-Զեւլանդից հապօնացիները կը գրաւեն Նիւ-Զեւլանդը, ուր կը բանդեն երկաթուղին և կը մեկուսացնեն Պորտ-Արտուրը: Կոնդրատովը պէտք է ջանան խուսափել կուրց մանչուրական քաղաքների մօտ. հապօնացիները, որպէս զի բնակիչներին իրանց կողմն ունենան, իսկ ուսանողները—մարդասիրութեան համար: Բոլոր նրանք, որոնք ծանօթ են ուսուցողականների հետ, համոզված են, որ նրանք բարենպաստութիւնից ամեն բան, ինչ հնարաւոր է, կանեն ազգայնականութեան շահերը փրկելու համար: Պատերազմը երկար կը տևի: Ամենավատ դէպքում հապօնացիները կը նահանջեն դէպի Կորէա, ուր պաշտպանութիւն կը գտնեն չինացիներ ընտրեան մէջ, բայց ուր մի և նոյն ժամանակ նրանց սպառնում է ժողովրդի անհաշտ ատելութիւնը, որ ամբողջ 600 տարի տեսել է հապօնացիների մէջ իր ամենավատ թշնամիներին: Եւրոպացիների ներկայ նշանաւոր ոչ ժողովրդ Կորէայում նշանակված են բացառապէս կորէացիներին զսպելու համար: (Новое Время)

Նոյն հապօնական ծրագրի մասին «Daily Express»-ին հեռագրում են Նապասակից, թէ հապօնական զինուորական միջնադարերը մշակել է Մանչուրիա ներս խուժելու արշաւանքի մանրամասն ծրագրերը: Այդ ծրագրի համաձայն, բաղաժաթիլը զօրքը առաջ կը խաղաղ դէպի Նարբին, Տուսէն գետի բերանը, Պուսիէնի ծոցից դէպի Կարա և միտամանակի առաջ կը խաղաղ այն ուժով գործադրեն, որոնք կենդանացած են Պենանից դէպի հիւսիս և սահմանված են գործողութիւնների համար: Եւրոպացիները մօտ: Եւրոպացիները առաջապահ ճակատը կը տարածվի Անչոնից մինչև Միտանիս, որ 90 վերստ հեռու է Եւրոպայից, հարաւային ուղղութեամբ: (Вирж. Вѣд.)

Կորէական կառավարութիւնը եւ ժողովուրդը: Կորէական կառավարութիւնը ամեն կերպ աջակցում է հապօնական իշխանութիւններին բրիտան, առաւել և ալ անհրաժեշտ միջոցների քննարկ գործում: Եւրոպական զինուորները առատօրէն ունեն ռազմավարներ: Սակայն «Daily Mail» լրագիրն հեռագրում են Զիֆուից, թէ ամերիկական հիւպատոս Փոուլսը լուր է ստացել, որ Շանհայում, Ջենչին-մօի շրջակայքում, ծագել են անկարգութիւններ այն պատճառով, որ ժողովուրդը մերժել է վճարել հարկերը: Այդ այն քաղաքն է, ուր 1898-ին տեղի ունեցաւ գերմանացիների կոտորածը: Միասնականները, այդ անկարգութիւնների պատճառով, թողնում են իրանց տեղերը: Ոստիկանութիւնը պահպանում է գերմանական կերպով: Թղթակիցը կցում է, որ այդ անկարգութիւնները լուրջ նշանակութիւն ունեն, գլխաւորապէս իրենց պատճառով, որով կօզմվի Գերմանիան Շանհայի պահպանութեան համար ընդարձակ միջոցներ ձեռք առնելու: Մէտից տիւրք տեղեկութիւններ են ստացվել Կորէա մասն ծագող հապօնական զօրքերի անսխալական վիճակի մասին:

Նոյն լրագիրը թղթակիցը հաղորդում է, որ Պորտ-Արտուրի ամեն մի ուղեւորութեամբ հապօնացիներին—կէս միլիոն ինչ: (В. В.)

Նապոստոմոսի գործում են Ջիւստանուս: Ինկուրից հաղորդում են, որ Շանհայ-գուանեան ճանապարհը չինացիների ձեռքում է. ուսանողներն այդ ճանապարհով չեն տանում: Նա լի է հապօնացի լրտեսներով և խուսաւորներով: Ամեն օր տանում են 300—400 մարդ, որոնք գնում են Նիւ-Զեւլան, ուր հապօնացիները բաժանում են գէները և կազմապարտում են խմբեր: Ասում են, որ մի քանի խմբերի պետերը հապօնացի օֆիցէրներ են: (Новое Время)

Հետաքրքիր տեղեկութիւններ: Բերլինից հեռագրում են. «Բերլինի զինուորական շրջաններում տիրում է այն համոզմունքը, թէ Պորտ-Արտուրի ուղեւորութեամբ, որ տեղի ունեցաւ մարտի 8-ին, նպատակ ունէր թաղանթի հապօնական զօրքերի Զինամուտի ամի իշխելու: Եւրոպական փոխարկական նաւերը իրարադրած են Նապոստոմոս այն նպատակով, որ թարմ զօրքեր վերցնեն, ուստի Բերլինում ենթադրում են, որ յաջնակում Պորտ-Արտուրի վրա կը վերսկսվի, երբ փոխարկական նաւերը նորից կը վերադառնան Գիւլին ծովը: Ջանապահ աղբիւրներից հաստատվում է, որ հապօնական նաւերը մտնում են չինական նաւահանգիստները, ուր նրանք վերցնում են անուշտ և պաշար: (Вирж. Вѣд.)

Լճագիւղից հեռագրում են, որ վճռական ճակատամարտը սպասվում է Մուլդէի ճանապարհի վրա: Լիսա գետը գրեթէ ազատ է ստուգներից: Ռուսները վճռել են ցոյց տալ ամենայնաւոր զինուորական: Գետի երեսները պաշտպանված է նոր ամբողջով և լաւ ակահաւորված է: Դէպի արեւմուտը կանգնած է կողակների ուժով զօրախումբ: (Рѣс)

ԹԻՒՐԻՒՄՆ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ

Մակեդոնական հարցի մասին նորից ձգձգվում է առաջ եկել: Բ. Դուրը, որ ամեն տեսակ պատրուակներ ստեղծելու հնարագիտութեան մէջ զանազան պրակտիկ է արժանացել, այս անգամ եւ առաջ բերեց մի պատրուակ: Նա գտաւ, որ Ռուսաստանի և Աւստրիայի առաջարկած ընթացքները ծրագրերը նախնայեցնում է սուլթանի վերահսկողական իրաւունքը, մասնաւորապէս այն կէտերը, որոնք վերաբերում են մակեդոնական ժողովրդի իրաւունքներին: Այդ ժողովրդի միջոցով պետք է իրաւացի գեներալ Զիօրլիսը, իր առաջարկած ծրագրի մէջ պահանջում է, որ իրան իրաւունք տրվի պատժել և պաշտօնից արձակել իրան ստորադասակ օֆիցէրներին և զինուորներին իր սեփական իշխանութեամբ, առանց հարցնելու Բ. Դուրի համաձայնութիւնը: Իտալացի գեներալը շատ լաւ գիտէ, որ առանց այդ պայմանի որ և է ամենափոքր բարենորոգութիւն անհնարին է: Թիւրք ժողովրդի ներքին և արտաքին կեանքը սուլթանին կը շատ պէս ընկնէ: Նրանց պատժելու կարգով լինի թիւրքական կառավարութիւնից, անկասկած գեներալ Զիօրլիսի առաջարկութիւնները միշտ կը մնան առաջարկութիւններ, ոչ մի պատժ տեղի չի ունենայ, սուլթանը իսկույն կը շատ պէս ընկնէ: Եւրոպական իշխանութիւնը չունենայ: Բայց Բ. Դուրը հէնց այդ բանից է վախենում: Բարենորոգութիւնը թղթի վրա, որքան կամենաք, բայց իրողապէս—հին կարգը ու կանոնը պէտք է անշուշտ միջոցներով:

Մակեդոնական խաղաղացիները կարելի է այն դէպքում, եթէ գեներալը վստահ լինի իր ստորադասիկների վրա, եթէ նա ապահով լինի, որ իր ժողովրդները իրանք չեն կողոպտի խաղաղ ժողովուրդը: Դրան համար պէտք է անշուշտ իրողականացած թիւրք ոստիկաններին մեթաթարիկ խաղաղացիներին, իսկ այդ անհնարին է, եթէ ժողովրդներիցի պետք պատժելու ծրագրի մէջ, որովհետեւ պարզվեց, որ յոյս չունի, թէ Ռուսաստանը դեռ ժողովրդներից համոզվելով Հեռաւոր-Արեւելքում, ձեռք կը վերցնէ Մակեդոնիայից, իսկ Եւրոպայում եւ բարեկամները կը ծագեն և պետութիւնները անտես կանեն մակեդոնական խնդիրը: Բայց Բ. Դուրը սխալվեց իր հաշիւներին մէջ, որովհետեւ պարզվեց, որ յոյս չունի, այդ բանից, Աւստրիան ամենին մտադիր չէ յոյսի սուլթանին: Նա որոշել է նոյն իսկ ցոյց տալու Բ. Դուրի դէմ, գէները կոչելով Նորվալտայի զօրքի մի մասը այն դէպքում, երբ թիւրքները կը շարունակեն իր յամաձայնութիւնը: Յամենայն դէպք երկու դաշնակից պետութիւնները այնքան ուժեղ են, որ կարող են ստիպել Բ. Դուրի հնարանքով և շատ հաւանական է, որ պահանջները աւելի մեծացնեն Միւրցշտէդի ծրագրի համաձայնութեամբ, մասնաւորապէս որ այժմ նիւթերը շատ կան այդ տեսակ պահանջների համար:

Բոլգարիան պահանջում է, որ ընթացիկները մտցնեն նաեւ Ալբանիայից վերաբերի վրա: Սերբիան ցանկանում է, որ ընթացիկների շրջանի մէջ մտցնելու նաեւ Հին-Սերբիայի գաւառները: Վերջիններս, նոր խռովութիւնները և յուզումները հայտնաբերում, ինչպէս և նոր կոտորած Սառաի Յունան գիւղում ցոյց են տալիս, որ 1895-ին ծրագրած ընթացիկները մնում են մնում տառ և ժամանակ է փոխարինել նրանց նորերով: Մեծ պետութիւնները արդէն ոչինչ չեն կարող փոխել Միւրցշտէդի ծրագրի մէջ այն սոսկ պատճառով, որ այդ ծրագիրը համարում են իրենց պահանջների միջնադար:

Բոլգարիան պահանջում է, որ ընթացիկները մտցնեն նաեւ Ալբանիայից վերաբերի վրա: Սերբիան ցանկանում է, որ ընթացիկների շրջանի մէջ մտցնելու նաեւ Հին-Սերբիայի գաւառները: Վերջիններս, նոր խռովութիւնները և յուզումները հայտնաբերում, ինչպէս և նոր կոտորած Սառաի Յունան գիւղում ցոյց են տալիս, որ 1895-ին ծրագրած ընթացիկները մնում են մնում տառ և ժամանակ է փոխարինել նրանց նորերով: Մեծ պետութիւնները արդէն ոչինչ չեն կարող փոխել Միւրցշտէդի ծրագրի մէջ այն սոսկ պատճառով, որ այդ ծրագիրը համարում են իրենց պահանջների միջնադար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍՍԻՅ ԳՈՐԴԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

17 մարտի

ԲԵՐԼԻՆ: Եւրոպայից հաղորդում են, որ ժողովուրդը Տօգի գիւղացիներ համաձայն, Պորտ-Արտուրի նաւահանգիստը փակելու փորձի ժամանակ սպանված են հապօնական 2 օֆիցէրներ և 2 զինուորներ ու վերաւորված են 9 մարդ: Դիակներն ազատվեցին և առնվեցին հապօնական նաւերի վրա:

Տօգի: (Բէյտ. գործ.): Երեկոյեան պարլամենտի արտակարգ նստաշրջանը վերջացրեց իր աշխատանքները, վերջնականապէս ընդունելով կառավարութեան ծրագրած պատերազմական տուրքը և միւս ֆինանսական միջոցները: Նստաշրջանի պաշտօնական փակումը կը կայանայ մարտի 17-ին:

ԿՐՕՆՇՏԱՆԻՏ: Հօգնագ կղզուց եկած լուրք համաձայն, երկէ «Երմակ» ստույգ կոտորող նաւը անցել է կղզու մօտով:

Տօգի: (Վոյֆի գործ.): Կորէայում ռուսները և հապօնացիները միշտ եղած ընդհարումը առիթով պաշտօնական գիւղացիների մէջ առկած է, որ մարտի 15-ին, առաւօտեան ժամը 11-ին հապօնական հետակի և հեծկազորի մի բաժին ընդհարվեց ռուսական ձիաւորների բաժնի հետ, որի թիւը հասնում էր մօտ 600 մարդու, որ բռնել էր 2 փնչիկ (?) : Այդ ընդհարումի ժամանակ հապօնական կորուստներն էին. մեռած մի օֆիցէր և 4 զինուոր: Ռուսական կորուստներն են մօտաւորապէս այդպիսի:

ՊԵՏՐՕՊՈԼԻՍ: Այս առաւօտ Պետերբուրգ անցաւ հաղորդակցութեան ճանապարհները միջնադար:

ՅԻՄԵՆԻՏՈՒՄ ՄԱՅԻՆ ՎՐԱ: Յրանկիւրտի հացի շուկայի անդամներից շատերը, որոնք հացահատիկներ են ներմուծում և շրջապաններ ունեն Յրանկիւրտում (Մայնի վրա), Կրէյց-նախում, Դարձնալուրում: Օֆիցէրական, Նիդերլանդներում, Ֆիդելիտում, Հէսսենում և ուրիշ տեղերում, ստորագրութիւնով պարտաւորվեցին ներկայ տարվայ ապրիլի 1-ից հարաւային Ռուսաստանում, Թիւրքիայում և Դուրայի ամերիկայի երկրներում հացահատիկ գնելու ժամանակ զործարկել բացառապէս գերմանա-հոլանդական դաշնակիցը:

Կ. ՊՈԼԻՍ: Առողջապահական խորհուրդը բժշկական քննութիւնով միայն ստանալու է կեցողութիւնը: Պորտ-Ալայիցի եկող ապրանքների դէմ առնված միջոցներ:

ՄՈՍԿՎԱ: Քաղաքային վարչութիւնը նշանակեց այն տեղերը, ուր պէտք է կառուցվեն 10 հատ գիւղերու ապաստաններ:

18 մարտի

ՕԴԵՍՍ: «Մայկա» շոգնաւոր կարանտինի պատճառով մէկ օր ու գիշեր բնակեց Կ. Պորտու: Օգէսան բողոքովին պատրաստ է ընդունելու 2 հմուլայի հերոսներին: Այն տեղը, ուր նրանց պէտք է զիմաւորեն պատգամաւորութիւնները, զարգարված է կամարով և ծովային նշաններով: Մոլային միջնադար թողաւ ծովազնայիններին երկու օր մնալ Օդէսս: Օֆիցէրներին ընկալանքներ են յատկացված լաւաւագին հիւրանոցում: Զաչեր են սարքվում զինուորական վարչութեան և բաղադրի կողմից:

Տօգի: (Բէյտ. գործ.): Պարլամենտի ընդունած վճիռ մէջ առնված է. «Կայսրի յայտարարած պատերազմը Ռուսաստանին արդարացի է, շիտակ և հետեւան է ցանկութեան, որպէս զի խաղաղութիւնը Արեւելեան Ասիայում հաստատվի ամուր հիւրերի վրա: Բոլոր հայտաւանները կը լարեն բոլոր ուղիքը, որպէս զի կատարեն իրանց պարտքը կայսերական հրամանը իրաւորեցնելու համար: Պատգամաւորների ժողովը, բաժանելով ժողովրդի հայրենաւորական զգացմունքները, վճռեց կառավարութեան ցանկալի միջոցները յատկացնելու այնպէս որ պատերազմի պահանջներն ապահովված են: Թէպէտ և մեր նաւատուրը մեծ աշխուժութիւններ հասաւ, սակայն պէտք է աչքից բաց չը թողնել, որ պատերազմը հաղիւ է սկսված և չէ կարելի նախատեսել, թէ երբ կը վերականգնվի խաղաղութիւնը, այդ պատճառով պատգամաւորների ժողովը հաստատաւ շարունակելու համար:»

ԲԵՐԼԻՆ: Տօգիից ստացված տեղեկութիւնները համաձայն, կորէական բերդապահ զօրքեր երկու բաժանումներ Պենանում, որոնք պատգամաւորներ, հրաման ստանալով զնալ դէպի հիւսիսային սահմանը: Շատ զինուորներ փախուսաւ տեղերին:

Տօգի: (Բէյտ. գործ.): Պատգամաւորները

